

Ուղեկից միությունները 21-րդ դարուն

Հաղորդագրություն ՀՄԸՄ-ի Պատգամատրական 12-րդ Ընդհանուր Ժողովի



Կարդալ էջ 6

Կարդալ էջ 3


ՀՀ ԱԺ Հայաստան-Գանատա բարեկամական խումբը հանդիպում ունեցած է Գանատայի նահանգային օրենսդիր մարմիններու անդամներուն հետ

Գանատայի Հայ Դատի յանձնախումբը շնորհաորեց նախկին նախարարուհի Մելանի Ժոլին վերընդորույթան առիթով



Կարդալ էջ 3

Կարդալ էջ 3

Հորիզոն | www.horizonweekly.ca 



Your Passport to Adventure.

2018 Passport TOURING

Selling start from **\$50,900***

LEAP ON IT!

HONDA
GABRIEL

Book your test drive with
Kevorg Asadourian or
Haig Khobassarian

7000, boul. Henri-Bourassa E.
Montréal, QC H1G 6C4
514 - 327 - 7777
www.hondagabriel.com



MARCHÉ
ADONIS

Un univers de fraîcheur

*Les Saveurs
de L'automne*



Հաղորդագրություն ՀՄԸՄ-ի Պատգամաւորական 12-րդ Ընդհանուր Ժողովի

Հայ մարմնակրթական ընդհանուր միութեան 12-րդ Պատգամաւորական ժողովը տեղի ունեցաւ 14-19 հոկտեմբեր 2019-ին՝ Ծաղկաձոր, Հայաստան: Ժողովին մասնակցեցան 75 իրաւասու ձայնով քոյրեր եւ եղբայրներ, ՀՅԴ Բիւրոյի ներկայացուցիչ՝ Յակոբ Տէր Խաչատուրեան եւ ՀՄԸՄ-ի մօտ ՀՅԴ Բիւրոյի ներկայացուցիչ Յակոբ Խաչերեան, Իրանի Հայ մշակութային Արարատ կազմակերպութեան ներկայացուցիչ Հարմիկ Զովեղեան, Համազգայինի Կեդրոնական վարչութեան ատենապետ Մկրտիչ Մկրտիչեան, ինչպէս նաեւ խորհրդակցական ձայնով Կեդրոնական վարչութեան անդամներ, Ի պաշտօնէ Կեդրոնական վարչութեան գործավարներ, «Մարզիկ» պաշտօնաթերթի խմբագիրը, յանձնախումբերու ներկայացուցիչներ, երիտասարդական համագումարի եւ Կեդրոնական վարչութեան ու շրջաններէ հրաւիրեալներ, ընդամենը՝ 110 ներկայներ:

Ժողովը գոհունակութեամբ ողջունեց Արցախի, Թիֆլիսի եւ Մոսկուայի նորակազմ շրջանները՝ միութեան մեծ ընտանիքին մասնաճիւղերուն թիւը բարձրացնելով 110-ի: Ժողովը համապարփակ քննութեան ենթարկեց ՀՄԸՄ-ի անցնող չորս տարիներու սերնդակերտման ու հայակերտման աշխատանքները, գնահատեց կատարուած իրագործումները եւ ապագայի հաշուոյն մշակեց նոր ծրագիրներ:

Պատգամաւորական ժողովը լայնօրէն անդրադարձաւ ՀՄԸՄ-ի սկսուած թիւերը, մարզական կեանքը եւ երիտասարդութիւնը յուզող հրատապ հարցերուն եւ համապատասխան որոշումներով քայլեր առաջադրեց անոնց լուծման թափ տալու նպատակով: Ժողովը քննեց նաեւ միութեան կազմակերպական ընդհանուր իրավիճակը եւ ընդգծեց ՀՄԸՄ-ի Հայաստանի, Արցախի եւ աշխարհասփիւռ մասնաճիւղերուն աշխատանքային դաշտերը ընդլայնելու կարելիութիւնները: Օրակարգի նիւթ դարձան նաեւ կանոնադրային տրամադրութիւններու կարգ մը բարեփոխումներ եւ միութեան «Մարզիկ» պաշտօնաթերթին ու կայքին զարգացման վերաբերող ծրագիրներ:

Ժողովը մանրամասն քննելով անդրադարձաւ անցնող քառամեակի ընթացքին միութեան համա-ՀՄԸՄ-ական 10-րդ մարզական խաղերու, Համա-ՀՄԸՄ-ական 11-րդ ընդհանուր բանակումին եւ միութեան 100-ամեակին նուիրուած ձեռնարկներուն:

Ժողովը արժեւորեց նաեւ միութեան առաջին երիտասարդական համագումարին եւ անկէ բխած թելադրանքները: Անդրադարձ կատարուեցաւ նաեւ ՀՄԸՄ-ի նորօր ստեղծուած հիմնադրամին:

Պատգամաւորական 12-րդ Ընդհանուր ժողովը շեշտեց միութեան եւ ընդհանրապէս Հայ ժողովուրդի դիմագրաւած համաշխարհայինացումի եւ քաղքենիացումի ահարկու վտանգներուն դէմ դնելու անհրաժեշտութիւնը:

Ժողովը անդրադարձաւ Սուրիոյ հիւսիսարեւելեան շրջանի թրջական ներթափանցումի քայլին եւ այդ իմաստով հրապարակեց հաղորդագրութիւն մը՝ առ ի գօրակցութիւն սուրիահայրենիներու եւ յատկապէս ՀՄԸՄ-ի Գամիշլիի մասնաճիւղին:

Իր աշխատանքներուն աւարտին, ժողովը ընտրեց յառաջիկայ քառամեայ նստաշրջանի նոր Կեդրոնական վարչութիւնը եւ Ընդհանուր ժողովի դիւանի ներկայութեան դիւանը կազմեց հետեւեալ ձեւով.

- Եղբ. Վաչէ Նաճարեան՝ ատենապետ (Լիբանան)
- Եղբ. Վիգէն Աւագեան՝ ատենադպիր (Լիբանան)
- Քոյր Թալին Օրտողլեան՝ գանձապահ (Լիբանան)
- Եղբ. Մանուկ Քէօզլէրեան (Սուրիա)
- Եղբ. Դաւիթ Յակոբեան (Հայաստան)
- Եղբ. Օշին Փիրումեան (Հայաստան)
- Եղբ. Հրաչ Միսեռեան (Ֆրանսա)
- Եղբ. Ֆեոի Թաժրա (Շուէտ)
- Եղբ. Մոսիկ Թովոզեան (Գանատա)
- Եղբ. Վահէ Թանաշեան (Արեւելեան Միացեալ Նահանգներ)
- Եղբ. Արմանտ Քիլիճեան (Արեւմտեան Միացեալ Նահանգներ)
- Եղբ. Արմանտ Թորգոմեան (Հարաւային Ամերիկա)
- Եղբ. Տիրան Վահրատեան (Աւստրալիա)

ՀՀ ԱԺ Հայաստան-Գանատա բարեկամական խումբը հանդիպում ունեցած է Գանատայի Ահաբազայի օրէնսդրական մարմիններու անդամներու հետ

15 Հոկտեմբեր 2019-ին ՀՀ ԱԺ Հայաստան-Գանատա բարեկամական խումբը հանդիպում ունեցաւ Հայաստան գտնուող Գանատայի շարք մը նահանգային օրէնսդրական մարմիններու անդամներու հետ, այս մասին դիմատետրի իր էջին մէջ գրած է պատգամաւոր Արման Եղոյեանը:

«Պատուիրակութեան կազմում էին Օնթարիոյի նահանգային խորհրդարանի անդամ Արիս Պապիկեանը, Քեպէկի նահանգային խորհրդարանի անդամ Կի Ուելթերը, Թորոնթոյի քաղաքային խորհրդի անդամ Ճիմ Քարիճիանիսը, Մոնթրէալի քաղաքային խորհրդի անդամ Մէրի Տերոսի, ինչպէս նաեւ՝ ՀՅԴ Հայ Դատի Կեդրոնական գրասենեակի անդամ Արշակ Մեսրոպեանը, Թորոնթոյի Հայ Դատի յանձնախմբի նախագահ Յարութ Մաթոսեանը եւ Քեպէկի Հայ Դատի յանձնախմբի անդամ Աբրահամ Նիգիպեանը:

Քննարկեցինք հայ-գանատական գործակցութեանն առնչուող մի շարք հարցեր: Մասնաւորապէս անդրադարձանք զիւրդատնտեսութեան, շրջակայ միջավայրի պահպանութեան, ջրային ռեսուրսների կառավարման, տեղեկատուական տեխնոլոգիաների զարգացման գանատական փորձին, երկրորդ՝ յարաբերութիւններում գանատահայ համայնքի դերին եւ դեռեւս ամբողջութեամբ չգործարկուած ներուժին: Խօսեցինք նաեւ գանատական խորհրդարանական կառավարման համակարգի՝ մեզ մօտ կիրառելի լաւագոյն տարրերը ուսումնասիրելու անհրաժեշտութեան մասին:

Երախտագիրտութիւն յայտնեցի մեր գործընկերներին Հայոց Յեղասպանութիւնը Գանատայում պաշտօնապէս ճանաչելու եւ ցեղասպանութիւնների ճանաչման ու կանխարգելման գործում հետեւողական լինելու համար: Այս համատեքստում կարելի էր ներկայումս Սիրիայի դէմ սանձազերծուած թուրքական յարձակմանը համարժէք միջազգային գնահատականն ու գործողութիւնները», գրած է ան:

Գանատայի Հայ Դատի յանձնախումբը շնորհաւորեց Ահաբազայի Ահաբազայի վերընտրութեան առիթով

Հոկտեմբեր 21-ին, Գանատայի դաշնակցային խորհրդարանական ընտրութիւններու արդիւնքներու հրապարակումէն անմիջապէս ետք, Գանատայի Հայ Դատի յանձնախումբի պատուիրակութիւնը Մոնթրէալի մէջ շնորհաւորեց Ահաբազայի Հայ Դատի յանձնախումբի ներկայացուցիչ Մհեր Գարաբաղեան վերահաստատեց նախկին նախարարուհիին հետ վերստին համագործակցելու յանձնախումբի պատրաստակամութիւնը: Միւսի ժողի իր կարգին շնորհակալութիւն յայտնեց Հայ Դատի յանձնախումբի գօրակցութեան համար:

Նշենք, որ Միւսի ժողի ընթացակարգ կառավարութեան մէջ եղած է Գանատայի ժառանգութեան, Զբօսաշրջութեան եւ Յրանքոֆոնիի նախարար: Հայ Դատի յանձնախումբի պատուիրակութեան մաս կը կազմէին նաեւ Շրջանային Հայ Դատի յանձնախումբի անդամներ Սարո Տէր Պետրոսեան եւ Յարութ Դաւիթեան:



Այցելեցէք Ս. Յակոբ Առաջնորդանիստ Մայր եկեղեցւոյ նոր կայքէջը՝ www.sourphagop.net



Chadir Meat & Restaurant
T. 416-750-7404
1848 Lawrence Avenue E.
Scarborough, ON M1R 2Y4
E-mail: info@ghadirmeatmarket.com



Anto Keledjian
Sales Representative
Residential & Commercial
Dir: (416) 930-2686
Bus: (416) 588-6777
570 Bloor St. W., Toronto, ON M5S 1K1
ANTOK13@GMAIL.COM • WWW.TORONTOSOLD.CA



SUQ
2 Champagne Drive # B9
Toronto, ON M3J 2C5
Tel: (416) 661 8998
www.suqkitchen.ca



ANI Restaurant
905.761.6484
1450 Clark Ave. West,
Thornhill ON L4J 7R5




Sutton
Sutton Group-Admiral Realty Inc., Brokerage
1206 Centre Street, Thornhill, Ontario L4J 3M0
Annie Varbedian
Sales Representative
Direct: (416) 918-3615
Office: (416) 739-7200
Fax: (416) 739-9367
annievarbed@hotm.com
www.suttongroupadmiral.com



hearing aid source
Andre Ayvazyan HIS B.A.S.
andre@HearingAidSource.ca
416 754 4327 (HEAR)
Parkway Mall, 85 Ellesmere Rd., #65, Toronto, ON, M1R 4B9



Diamond Realty
Gary Chahinian President, Broker of Record
416-258-8892
Gabriel Chahinian Sales Representative
647-580-5818



IDA
Part of the **Royal** family of pharmacies.
Pharmacists
Sarkis Balian
Vartan Balian
Maral Abdalian Balian
Cassandra Pharmacy Inc.
2040 Victoria Park Ave.
Toronto, Ontario
M1R 1V2
Tel. : **416.449.2040**
Fax: **416.449.2048**



ANI BAKERY
ԱՆԻ ՓՈԱՊԱՆ
Middle Eastern Pizza
Lahmajoun
ARSEN DABBAGHIAN
25 Howden Road, Unit #2
Scarborough, Ontario M1R 3C8
Tel: 416.285.7164

Մոնթրեալի մէջ տեղի ունեցաւ Հայեցի Դաստիարակութեան խորհուրդին կազմակերպած «Ինքնութեան ճանաչում» լսարանը

Հովանաւորութեամբ եւ ներկայութեամբ Գանատայի Հայոց Թեմի Առաջնորդ Գերազնորհ Տ. Բարսեղ Արք. Չարեանի եւ կազմակերպութեամբ Ազգային Առաջնորդարանի Հայեցի Դաստիարակութեան խորհուրդին, Հինգշաբթի, 17 Հոկտեմբեր 2019-ին, Մոնթրեալի Հայ կեդրոնի «Արթո եւ Այլի Մարգարեան» ճաշարահին մէջ տեղի ունեցաւ «Ինքնութեան ճանաչում» թեմայով լսարան մը, որ առիթ եղաւ քննարկելու սփիւռքահայութեան ինքնութեան ճանաչման հիմնախնդիրներն ու մարտահրաւէրները:

Առաջնորդ Սրբազան Հօր կողքին ներկայ էին Թեմի Առաջնորդական Փոխանորդ Գերապատիւ Տ. Գեղարք Մայրապետի Վարդապետ Քրիստապետեան, Ազգային կեդրոնական վարչութեան անդամ տոբթ. Ժիրայր Պասաճեան, Ազգային վարչութեան ատենապետ պրն. Համբիկ Գարայանն ու անդամներ, ազգային երեսփոխաններ, հոգաբարձութեանց ներկայացուցիչներ եւ սփիւռքի հիմնահարցերով հետաքրքրուող եւ հայակերտուածի ու հայապահպանութեան սրբազան գործին հաւատացող հանրութեան մը:

Յանուն Ազգային Առաջնորդարանի եւ Հայեցի Դաստիարակութեան խորհուրդին, բարի գալուստի եւ բացման խօսքով հանդէս եկաւ խորհուրդի անդամ տոբթ. Միմա Աբրահամեան Յովհաննէսեան: Ան ներկայացուց լսարանի նիւթերն ու դասախօսները:

Լսարանը բաժնուած էր երեք դասախօսութիւններու: Առաջին դասախօսն էր տոբթ. Լայլ Մանճիկեան, որ ներկայացուց ինքնութեան ճանաչումն ու հայրենիք եւ պատկանելիութիւն թեման: Երկրորդ դասախօսն էր Գերապատիւ Տ. Գեղարք Մայրապետի Վարդապետ Քրիստապետեան, որ ներկայացուց ինքնութեան ճանաչումն ու կրօնըն ու եկեղեցին, իսկ երրորդ դասախօսը՝ պրն. Քրիստափոր Միքայէլեան, որ ներկայացուց ինքնութեան ճանաչումն ու լեզուն եւ մշակութիւնը: Երեք դասախօսներն ալ գի-



տական, վաւերագրական-պատմական փաստերով եւ օրինակներով ներկայացուցին իրենց նիւթերը: Այնուհետեւ, տեղի ունեցաւ հարց-պատասխան:

Իր օրհնութեան եւ փակման խօսքին մէջ Առաջնորդ Սրբազան Հայրը դրուատեց Հայեցի Դաստիարակութեան խորհուրդին ջանքերը, գնահատանքով անդրադարձաւ դասախօսներուն նախանձախնդիր մօտեցումին եւ յատուկ կարեւորութեամբ անդրադարձաւ ինքնութեան ճանաչման այն մարտահրաւէրներուն ու առաջադրանքներուն, որոնք կը կարօտին երախտաշատ ճիգերու աւելի եւս լարումի:

Հանդիպումը վերջ գտաւ ընկերային մտերմիկ պահով:

Նշենք, որ նոյն դասախօսութիւնը տեղի պիտի ունենայ նաեւ Թորոնթոյի մէջ, Հինգշաբթի, 24 Հոկտեմբերին, երեկոյան ժամը 7-ին, Ս. Աստուածածին եկեղեցւոյ «Յովնանեան» սրահին մէջ:

Դիւան Ազգային Առաջնորդարանի

ՀՄԸՄ Լաւալի Ծառայակի Խումբի մարզիկներուն նոր նուաճումները

ՀՄԸՄ-Կամք մասնագիտի մարզիկներուն նուաճումները



Ամէն տարի, Ամերիկայի Նիւ Եորք նահանգի Մալոն քաղաքի հանրայայտ Franklin Academy High School-ի մէջ կը կազմակերպուի դպրոցականներու ճատրակի ամենամեայ մրցաշարը (Upstate NY Scholastic Chess Tournament): Այս մրցաշարին իրենց մասնակցութիւնը կը բերեն Նիւ Եորք նահանգի եւ յարակից շրջաններու ճատրակի խումբերը: Ինչպէս անցեալ տարի, այս տարի եւս, մրցաշարի կազմակերպիչները ՀՄԸՄ Լաւալի ճատրակի խումբին մասնակցելու հրաւէր դրկած էին:

Մրցաշարքը տեղի ունեցաւ 2019 Մայիսի 19-ին:

ՀՄԸՄ Լաւալի խումբը մասնակցեցաւ իր հետեւեալ 6 մարզիկներով. Եւա Խաչիկեան՝ 8 տարեկան, Առէն Կարապետեան՝ 11, Մհեր Կարապետեան՝ 12, Միքայէլ Մանուչարեան՝ 13, Վիգէն Մանուչարեան՝ 13 եւ մարզիչը՝ Արամ Սեւակ Աֆարեանը՝ 18 տարեկան: Առաջին 5 մարզիկները մասնակցեցան խմբային մրցաշարքին, իսկ Արամ Սեւակը մասնակցեցաւ անհատական մրցաշարքին: ՀՄԸՄ Լաւալի խումբը քաջախիբու եկած էին բոլորին ծնողները եւ եղբ. Սարգիս Գաւուքեանը:

Մեր բոլոր մարզիկները հիանալի

կերպով խաղացին եւ մասնակցող 11 խումբերուն մէջ, ի պատիւ իրենց, փորձառու եւ տարիքով իրենց շատ գերազանցող MASSENA խումբին հետ 17 հաւասար միաւորներով կիսեցին առաջին եւ երկրորդ դիրքերը: Իսկ Արամ Սեւակ Աֆարեանը, յաղթելով բոլոր իր մրցակիցներուն, 6 միաւորով միանձնեայ գրաւեց առաջին դիրքը եւ արժանացաւ ամենամեծ պատուաւոր բաժակին:

Այս տարուան Սեպտեմբերի 6-8-ը, Մոնթրեալի Loisirs St-Henri-ի մէջ տեղի ունեցաւ Մոնթրեալի ճատրակի բաց մրցաշարքը (CHOM-2019), որուն ՀՄԸՄ Լաւալի ճատրակի խումբի 3 մարզիկներ իրենց մասնակցութիւնը բերին: Մեր մարզիկները այս մրցաշարքին ալ փայլուն խաղարկութիւն ցուցաբերեցին եւ իրենց խումբերուն մէջ նուաճեցին հետեւեալ դիրքերը. Արամ Սեւակ Աֆարեանը՝ 3-րդ, Թաշեան Մարտիկ՝ 4-րդ եւ Եւա Խաչիկեան՝ 4-րդ:

Նոր եւ աւելի նշանակալից յաղթանակներու մաղթանքներով կը շնորհաւորենք ՀՄԸՄ Լաւալի ճատրակի խումբի բոլոր մարզիկները եւ մարզիչը՝ եղբ. Արամ Սեւակ Աֆարեանը, իրենց այս, մեզ շատ ուրախացնող նուաճումներուն համար:

Հեղինակ՝ Քեամանէտան

ՀՄԸՄ-Կամք մասնագիտի ոտնագնդակի մարզական խումբերը, որոնք մաս կը կազմեն Concordia League-ին, ընթացիկ տարուան ամառային եղանակի մրցումներուն աւարտին ապահովեցին պատուաբեր արդիւնքներ: Ստորեւ կը հրապարակենք արդիւնքները՝

- U16/18 ոտնագնդակի աղջկանց խումբը



հասաւ աւարտական խաղերուն եւ գրաւեց ԱՌԱՋԻՆ դիրքը:

- Senior Division 3 ոտնագնդակի տղոց խումբը գրաւեց այս եղանակի ԱՌԱՋԻՆ դիրքը:

- U13 ոտնագնդակի տղոց խումբը այս եղանակին գրաւեց ԵՐԿՐՈՐԴ դիրքը:

- U11 ոտնագնդակի տղոց խումբը այս եղանակին ոչ մէկ պարտութիւն կրեց եւ ախոյեանութիւնը նուաճեց:

- Concordia League Goal Scorer հռչակուեցաւ եղբ. Յիլիփ Օհաննէսեան, որ այս եղանակին արձանագրած է 21 կոլ:

- Senior All Star խաղերուն մաս կազմեց եղբ. Մայքըլ Նալպանտեան:

ՀՄԸՄ-Կամք մասնագիտի վարչութիւնը մեծապէս կը գնահատէ մարզիկներուն եւ պատասխանատուներուն տարած աշխատանքը եւ ձեռք ձգած պատուաբեր արդիւնքները ու կը մաղթէ, որ յառաջիկային նոյն թափով շարունակէք:

Ոտնագնդակի տղոց Senior Division 3 խումբի մարզիկներն են՝ Այվազեան Ժորժ, Շահինեան Շանթ, Տէտէեան Էտի, Տիմիթեան Վարանդ, Ֆրեդիկ Փիթըր, Կիլոյեան Աբրահամ, Հէմպթրեան Մաթիո, Գալօլլեան Ժորժ, Գասպար Արչէն, Կիլոյեան Յակոբ, Նոյնտեան Սարո, Շահինեան Զարեհ, Ստեփանեան Զարեհ, Ստեփանեան Բաֆֆի, Թիթիլեան Անդրանիկ, Վարդանի Ալեքս, Իգիտպաղեան Սեւան եւ Զուրաբեան Արման, մարզիչն է Կապի Միլոսեան եւ օգնականը՝ Զարեհ Շահինեան:

Ոտնագնդակի աղջկանց U16/17 խումբի մարզիկներն են՝ Այնէճեան Սեւան, Պահլիւանեան Սեւանայ, Պետրոսեան Փաթիլ, Տէտէեան Անթիլիա, Տիմիթեան Վանէ, Ճիպրուեան Լիա, Հայրապետեան Դալար, Ծապրայեան Միլանա, Գաթարոյեան Ալիք, Գաթարոյեան Դուին, Գաթիպեան Ալինա, Խըշիւրեան Սարին, Քէօկէրեան Ժիլի, Մարգարեան Ալիք, Մարգարեան Քաթիա, Մէնտէզ Սոթերա, Նշանեան Լորա, Բաբախեան Սարին, Փիլիպոսեան Արենի, Եղգեան Ժիլիա, Եսայեան Մարի, Իգիտպաղեան Փաթիլ, Եոսուֆ Նարին եւ Զուրիքեան Սիլիա, մարզիչն է Մարտիկ Գաթարոյեան եւ օգնականը՝ Անտոնի Ճիպրուեան:

Ոտնագնդակի տղոց U14 խումբի մարզիկներն են՝ Աճէմեան Սեւան, Արամալի Ճոնի-Յարութ, Արմութլու Առէն, Ազատեան Էնզօ, Քրոքըր Ճէյմզ, Տէրտէրեան Ալեքսանտր, Ճիւահերճեան Նոա, Գահրամանեան Արա, Հայրապետեան Շանթ, Գաթարեան Ռուբէն:

Գաթարոյեան Աշոտ, Քէչէճեան Վիգէն, Գալուստեան Քրիստ, Քուրի-Գէորգեան Ճոնի Փասքալ, Լէփէճեան Առէն, Նարինեան Կապրիլէ, Փանոսեան Յակոբ, Փիլիպոսեան Սարգիսեան Գէորգ, Թորոսեան Տարօն, Վեթըր Մայքըլ Արմէն, Երեցեան Դաւիթ եւ Զաքարեան Արման, մարզիչն է Կարի Ճիւահերճեան եւ օգնականը՝ Արա Գաթարոյեան:

Քոյր Շողիկ Ազարիկեան

Voyages
HAIG
Travel

Ձեր բոլոր ճամբորդական
Կարիքներուն համար հեռաձայնել՝
(514) 284-7676

ՅԱՏՈՒԿ ԳԻՆԵՐ ԴԷՊԻ ՀԱՅԱՍՏԱՆ...

**ԼԱՒՊԳՈՅՆ ՍՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ ԵՒ
ՅԱՐՄԱՐՄԳՈՅՆ ԳԻՆԵՐ**

PERMIS DE QUÉBEC

3438 Rue St-Denis, Montreal, QC H2X 3L3, Fax: 514-284-7677

Հոգ, Սեւ Ծովու Ափին... Համշէնահայերը



Ես պատմարան չեմ, թրքագէտ չեմ, ազգագրագէտ չեմ: Մէկ խօսքով, մասնագէտը չեմ այն թեմային, որուն մասին կ'ուզեմ միտքերս բաժնեկցիլ:

Հոկտեմբեր 2008-ի սկիզբը Համշէն այցելեցի: Կարճ այցելութիւն էր, ընդամենը՝ երեք օր, որոնց ընթացքին Հոփայի եւ շրջապատի լեռները շրջեցանք, գիւղեր այցելեցինք եւ քանի մը համշէնահայու հանդիպելու առիթ ունեցանք:

Հոփան այսօրուան թուրքիոյ Արդուին նահանգի մէջ 32.000 բնակչութեամբ ծովեզերեայ քաղաք է: Բնակչութեան մեծամասնութիւնը համշէնահայեր են:

Վերջին տարիներուն շատ գրուած եւ խօսուած է համշէնահայութեան եւ Համշէնի մասին: Հայկազուն Ալվրցեանը (Արեւմտահայոց հարցերի ուսումնասիրութեան կեդրոնի տնօրէն, հայագէտ, բանասիրական գիտութիւններու թեկնածու) կը նշէ. «Համշէնահայերը մինչեւ 19-րդ դարու 90-ական թուականները հիմնականում բնակուել են թուրքիոյ Սամսոն քաղաքից մինչեւ Պաթում ընկած ծովափնեայ ընդարձակ տարածքներում: Պատմիչ Ղեւոնդի վկայութեամբ, 788 թ. Մեծ Հայքի Կոտայք եւ Արագածոտն գաւառներից մօտ 12.000 մարդ, չղիմանալով արաբական իշխանութեան ճնշումներին, Աբաս Ամատունու եւ նրա որդի Համամ Պայագատի գլխավորութեամբ հեռանում է Հայաստանից եւ բնակութիւն հաստատում Բիւզանդական կայսրութեան մաս կազմող Պոնտոսում: Ի դէպ, Պոնտոսում հայերն ապրում էին հնագոյն ժամանակներից: Հետագայ դարերում նրանց թիւն աւելանում է քաղաքական եւ տնտեսական ճնշումների պատճառով Հայաստանի տարբեր գաւառներից արտագաղթածների հաշուին: Նման մի խոշոր արտագաղթ էր նաեւ այս մէկը: Բիւզանդիայի կայսր Կոստանդինը սիրով ընդունում է հայերին, բնակեցնում բարեբեր հողերում, իսկ հայ նախարարներին նուիրում Տամբուր քաղաքը, որը կարճ ժամանակ անց պատերազմի պատճառով հիմնովին աւերում է: Համամ Ամատունին այն վերականգնում է եւ իր անունով կոչում Համամաշէն (այստեղից էլ՝ Համշէն)»:

Այս տարածքի համշէնահայերը ե՞րբ իսլամացել են: Հայկազուն Ալվրցեանին համաձայն այդ ընթացքը ունեցած է 4 փուլ. առաջին փուլ՝ 16-րդ դա-

րու վերջերը՝ 1722, երկրորդ փուլ՝ 1722-1838, երրորդ փուլ՝ 1838 մինչեւ 1915 Հայոց ցեղասպանութիւնը, չորրորդ փուլ՝ 1915-1930 թուականներ:

Պատմութեան մասին այսքանով բաւարարուիմ:

Այս այցելութիւնը պայմանական երկու մասին պիտի բաժնեմ. Բնութիւն եւ մարդ: Նախ՝ բնութեան մասին:

Երեւանէն Արեւմտեան Հայաստան անցանք Վրաստանի ճամբով: Այս ճանապարհի ամէնէն դժուար եւ անխնամ եւ յոգնեցնող հատուածը հայ-վրացական սահմանի վրացական մասն էր: Մարտ 2018-ին նոյն ճանապարհով Կարին գացած էինք: Այն ատեն ալ վատ ու դժուար էր. Քանի մը քիլոմետր ճամբան հազիւ մէկ ժամէն կրցանք անցնիլ: Անցեալ ամիսներուն ոչ մէկ նորոգութիւն եղած է: Զաւախքի հանգէպ վրացական իշխանութիւններու դիտումնաւոր անտարբերութեան վառ ապացոյցն է այս ճամբան:

Վրաստան-Կարս-Արտահան-Արդուին-Հոփա ճամբան բաւական հեղասահ ընթացաւ: Արտահանի հարազատ, լեռն լեռներէն ետք Հոփայի անծայրածիր, կանաչ, թիկունք-թիկունքի տուած լեռները, մերթ բարձրացող ճանապարհին տակ տարածուող ամպերը, անսահման լուսութիւնը սքանչելի բնանկար կը կազմեն, ու այդ նկարին մէջ յայտնուելը աննկարագրելի հաճոյք է: Զրվէժներն ու լիճերը, Զիլ Բերդն ու Դժոխքի դուռ կոչուող վայրերը անպայման կը գրաւեն զբօսաշրջիկները: Բայց...

Խոստովանիմ, որ ես չկրցայ գանոնք լիակատար վայելիլ: Շրջանի պատմութեան մանրամասն ծանօթ չեմ ու թերեւս այդ պատճառով չկրցայ վայրերուն մէջ պատմական դէպքեր եւ դէմքեր տեղադրել, պատմութիւնը վերապրել: Սա իմ թերացումիս արդար պատիժն էր: Այս վայրերուն մէջ հայկական հետքեր (եկեղեցի, մատուռ, շիրմաքար եւ այլն) չնկատեցի... Երեւան վերադարձիս այս մասին տարբեր պատասխաններ ստացայ: Մէկը ըսաւ, որ գիւղերուն մէջ տակաւին այդ հետքերը կան, եւ «յաւ իմացողները» գիտեն: Ուրիշ մը ըսաւ, որ հարիւրաւոր տարիներու ընթացքին կամաց-կամաց անոնք ջնջուած են:

Բայց հայերէնի թուրքոլ ձայները կը վկայեն հայերու գոյութեան մասին: Մեր խումբը քանի մը համշէնահայու հանդի-

պելու առիթ ունեցաւ: Ամէնէն հետաքրքրականը երեկոյեան ճաշարանին մէջ հաւաքուած երիտասարդներու հետ պատահական հանդիպումն էր: Իրենց թրքախառն գրոյցներուն մէջ հայերէն բառերը կ'որսայի. «Կ'ուզիմ, ելլուշ, բերէի գու...»: Առանձին գրոյցի ընթացքին, երբ իմացան, որ Հայաստանէն եկած ենք, անոնք սկսան աւելի հանգիստ ու ջերմ խօսիլ: Խաժ, կապոյտ, կանաչ աչքերով երիտասարդները մտահոգ են, որ իրենք կը կորսնցնեն իրենց նախնիներու լեզուն: Հայերէն չեն գրեր. այրուբները չեն գիտեր, բայց իրենց բարբառը պահել կ'ուզեն:

Աւելի ուշ քանի մը համշէնահայեր ընթրիքին միացան: Սուլթանն ու Նեմտեթ զոյգը մօտաւորապէս մէկուկէս տարի առաջ ամուսնացել են: Նեմտեթը համշէնահայ է: Սուլթանը Տիգրանահերտէն (Քաղաքի Սուր շրջանէն) քրտացած հայ ընտանիքի գաւակ է, որ իր պատկանելիութեան զգացումը դեռ կը պահպանէ: Երկուքն ալ փնտոած են հայ արմատներով կողակից ու գտած են: Հոփացի Նեմտեթի խօսքին մէջ ցաւ կայ. նոր սերունդին, իր գարմիկներուն համար ցաւ է, որովհետեւ անոնք կը մոռնան իրենց լեզուն: Հիմա լեզուն կը մոռնան, վաղը:

Կար նաեւ Մարիամը (անունը փոխած եմ), որ դարձեալ Տիգրանահերտ քաղաքի Սուր շրջանէն էր (Սուրը Տիգրանահերտի պատմական այն շրջանն է, որ 2015-ին թրքական բանակի հարուածներուն թիրախ դարձաւ, որուն պատճառով 300.000-էն աւելի քիւրտ գաղթական դարձաւ, շրջանը գրեթէ ամբողջութեամբ քար ու քանդ եղաւ): Մարիամը պատանի տարիքին գիտցած է, որ հայ է եւ այդ բացայայտումի տաղանապը մինչեւ այսօր կ'ապրի: Այն ատեն միայն անդրադարձած է, որ մեծօր եղբոր արտասանած տարօրինակ բառերը հայերէն աղօթքներ էին: Թրքերէնով կարգացած է Մկրտիչ Մարկոսեանին գիրքերը ու աւելի կապուած՝ Տիգրանահերտին եւ հայու արմատին:

Մարիամը արագ կը խօսէր.. կարծես՝ այդ կարճ, պատահական եւ աղմկոտ հանդիպումի ընթացքին իր արմատներու մասին ամէն, ամէն բան կ'ուզէր պատմել:

«Քոյրս ծանօթացել էր տէրսիմի քիւրտ երիտասարդի մը հետ: Զիրար

սիրած էին: Երբ մեր փեսացուն ընտանիքը եկած էր քրոջս ձեռքը խնդրելու, մայրս յստակօրէն ըսաւ. «Մեր մասին իրականութիւնը պէտք է ձեզի ըսեմ: Աւելի լաւ է, որ մեզմէ լսէք, քան՝ մեր գրացիներէն: Մենք քրտացած հայեր ենք»: Անակնկալ լուսութիւնը խզեց փեսացուն չափազանց մոլեռանդ եւ պահպանողական քեռայրը, շարունակեց Մարիամը, «է՛հ, այս հողերուն վրայ ո՞վ այդպիսի դժբախտութիւն չէ ապրած...»:

«Թերեւս այդպիսի դժբախտութեան զոհ էր նաեւ Ինքը, քեռայրը», մտածեցի բարձրաձայն... Մարիամը չժխտեց եւ շարունակեց պատմել ընտանիքին եւ իր տաղանապներուն մասին: Ամուսնացած է. 7 տարեկան աղջիկ ունի: Ե՞րբ կրնայ իրականութիւնը պատմել անոր: Ի՞նչ տաղանապներ կրնայ ապրիլ աղջիկը: Զէ՞ որ թուրքերը օրէ օր աւելի անհանդուրժող կը դառնան: Ինչպէ՞ս խնայել անոր զգացումները.. չէ՞ որ ինքը անցած է նոյն ճանապարհը: Բայց Մարիամը վստահեցուց, որ անպայման պիտի պատմէ. պիտի չթաքնէ:

Գիշերուան հանդիպումներու տպաւորութիւնները չթօթափած՝ առաւօտը հասաւ: Այս անգամ համշէնահայ գիւղական տուն մըն էր մեր ժամադրավայրը, ուր մեզ հիւրընկալեց Նարիէ տատիկին ընտանիքը: «Նար» արաբերէն «կրակ, հուր» կը նշանակէ... եւ դեռ այս տարիքին սուր եւ սթափ էր համշէնահայ Նարիէն... Կանաչապատ լեռներուն մէջ, գիւղական ամառնային տան մէջ թագուհի է Նարիէն: Որդին, թոռնիկն ու ծոռները ժառանգած են իր ծաւ կապոյտ աչքերը: Համշէնի քաղցր բարբառը հասած է մինչեւ թոռնիկը: Արդէն հասուն տարիքով թոռնիկին հետ համշէնահայերէնով կատակներուն մէջէն քաղցր կը զրնգայ անոր ծիծաղը:

Իսկ հազիւ 10-12 տարեկան թոռնիկներուն երբ հարցնես՝ «Դուք թո՞ւրք էք», ընդվզումով կը պատասխանեն՝ «Ո՛չ, մենք համշէնցի հայ ենք»:

Երեք օրը բաւարար չէր, բայց կրնամ ըսել, որ Համշէնի մէջ հայասիրութեան, պատկանելիութեան ճշացող երեւոյթներու չհանդիպեցայ, սակայն զգացի հայ ըլլալու, արմատին կառչած ապրելու տաղանապը:

ՄԱՌԻ ՄԵՐՏԻՍԱՆԵԱՆ

Ուղեկից միութիւնները 21-րդ դարուն

Համագագայինի Կեդրոնական Վարչութեան ատենապետ Մկրտիչ Մկրտիչեանի խօսքը՝ ՀՄԸՄ-ի 12-րդ Պատգամաւորական ժողովին:

20-րդ դարու երկրորդ կէսին մարդու կողմէ արմատականօրէն փոփոխութեան ենթարկուած արհեստագիտական միջոցները խորունկ եւ անվերադարձ կերպով փոփոխութեան ենթարկած են մարդկային փոխադարձ յարաբերութիւնները: Այս փոխադրեցութիւններու երեւոյթը հազարամեակներէ ի վեր կը զեկավարէ մարդկութիւնը: Ատոր հետեւանքով այսօր, համեմատած նախորդ դարու մեր կեանքին, փոխուած են մտայնութիւնները, տեւական հոլովոյթի մէջ է մարդոց մտածելակերպը: Մարդիկ դարձած են աւելի գործնապաշտ, մէկ կողմ հրեւոյժ ցարդ իրենց կեանքի հիմնական սկզբունքները՝ իրենց գաղափարական կեցուածքները:

Այս պատճառով հաւատքը, կրօնական թէ այլ տեսակի, դարձած է դիւրաբեկ. մինչդեռ ատիկա կարեւոր դեր կը խաղայ աշխատանքներու յաջող ընթացքին եւ արդիւնաւէտ աւարտին համար: Հետեւաբար ճիգ պէտք է խնայել մարդոց էութեան մէջ գաղափարականութիւնը վերականգնելու: Ասիկա դիւրին գործ մը չէ, նոյնիսկ ՀՄԸՄ-ի նման գաղափարական հարուստ անցեալ ունեցող հաւաքականութիւններուն համար: Դիւրին չէ, որովհետեւ նախորդ դարու կրթամշակութային 1968 թուականով խորհրդանշուող յեղափոխութեան վաղորդայնէն սկսեալ հետեւողական պայքար տարուած է բոլոր գաղափարաբանութիւններուն դէմ: Այդպէս է մինչեւ այսօր եւ ոչինչ ցոյց կու տայ, թէ այդ ոլորտներէն ներս բան պիտի փոխուի մօտաւոր ապագային:

Սակայն մենք գիտենք, թէ մեզի պէս աշխարհացրիւ փոքր հաւաքականութեան մը համար ինչքա՞ն դաժան է մարդկութեան այս նոր պատկերը, ուր տկարները կը ճգմուին կամ կ'անհետանան: Հետեւաբար մեզի համար դէպի իրական գաղափարականութիւն վերադարձը հրամայական է: Մեր ուղեկից միութիւնները գաղափարական հիմք ունեցող միաւորներ են. բարեփոքական, սկստական ու մարմնակրթական, կրթական ու մշակութային: Այսպէս են ՀՕՄ-ը, ՀՄԸՄ-ն ու Համագագայինը:

Այս վիճակին մէջ յստակ է, որ գաղափարական միութիւնները իրենց ուժականութենէն բաւական բան պիտի կորսնցնեն, որովհետեւ տնտեսական վայրի մրցակցութեան ներկայ մթնոլորտը մեծ հարուած կը հասցնէ անոնց անդամներու կամաւորականութեան վրայ հիմնուած գործելակերպին: Ինչպէ՞ս կրնայ մրցիլ կամաւորականութիւնը տնտեսականութեան դէմ: Ինչ-քա՞ն կրնայ տոկալ կամաւոր աշխատողի ինքնասիրութիւնն ու արժանապատուութիւնը, երբ կը տեսնէ, թէ իրմէ նուազ արժէքաւոր անհատներ՝ նուազ որակաւոր աշխատանքի շնորհիւ կը տիրանան համբաւի, կ'արժանանան յարգանքի, երբ իրենց աշխատանքը ընդհակառակը յաճախ կ'արհամարհուի: Մեր միութիւնները արդէն շատոնց կը կրեն այդ նոր դրութեան հասցուցած վնասները: Մեր միտքերուն մէջ դեռ թարմ են մեր մարդական եւ այլ միաւորներու դառն վէրքերը:

Բնականաբար չենք հակադրեր կամաւորականութիւնը արհեստավարժութեան: Կամաւորականութեան վրայ հիմնուած մեր միաւորները իրենց գործին մէջ ցուցաբերած բծախնդրութեան, իրենց միութեան հանդէպ ունեցած ջերմ զգացումներուն, յարգանքին եւ հաւատքին շնորհիւ՝ իրենց կամաւորականութիւնը յաճախ կը հասցնեն արհեստավարժութեան աստիճանին:

ՀՄԸՄ-ի նշանաբանն է՝ «Բարձրացի՛ր, բարձրացո՛ւր»: Այս նշանաբանը կը պարտաւորեցնէ: Ան գաղափարականութեան արտայայտիչ է: Բարձրանալ կը նշանակէ ճիգ թափել ինքզինք բարելաւելու, որպէսզի կարելի ըլլայ ուրիշին օգնելը, որպէսզի ա՛ն ալ իր կարգին բարձրանալու կարողութեան տիրանայ. ինքնասրբազրութիւն՝ որ կ'առաջնորդէ ուրիշներու մաքրման. կա՞յ ասիկէ աւելի ազնիւ նպատակակէտ:

ՀՕՄ-ն ու Համագագայինը, հիմնուած նոյնքան գաղափարական մարդոց կողմէ, որքան՝ ՀՄԸՄ-ի հիմնադիրները, նոյնատիպ հաւաքականութիւններէ կազմուած են: Անոնց հասարակաց գիծերը բազմաթիւ են: Գործելաձեւի, գործունէութեան ասպարէզներու եւ անմիջական նպատակներու տարբերութիւնները ոչինչ կը փոխեն իրենց բիւրեղեայ էութենէն: Բազմաթիւ տասնամեակներու իրենց գործունէութեամբ անոնք երաշխաւորած են սփիւռքեան բազմաթիւ սերունդներու

հայկականութիւնը:

Խոստովանինք, որ դժուար է պահպանել ազնիւ նկարագիրը, երբ շրջապատուած ես քեզի վնաս հասցնելու, նոյնիսկ՝ քեզ անհետացնելու պատրաստ հակառակորդներով: Սակայն այս միութիւնները ուրիշ ընտրանք չունին, քանի իրենց առաքելութիւնը կը մնայ նոյնը, այսինքն՝ գուրգուրալ նոր սերունդներուն վրայ գանձք հասցնելով պատասխանատուութիւններ ստանձնելու մակարդակին, իրենց ամբողջական կարողականութիւնը յարմարեցնելով արդի ժամանակներուն: Մէկ խօսքով՝ առաքելութիւնը կը մնայ նոյնը, փոփոխութեան կ'ենթարկուին ի գործ դրուող միջոցները: Ասիկա՛ է ապագայ յաջողութիւններու բանալին:

Մինչեւ երէկ Համագագայինն ալ այդ փնտռութիւն մէջ էր: Այսօր գործը արդէն հասունցած է եւ քանի մը ամիսներ առաջ հրապարակ նետուած է www.h-pem.com մշակութային հարթակը, ուր կը ներկայացուի հայկական մշակոյթը իր բոլոր երեսներով՝ անցեալի, ներկայի եւ ապագան պատրաստող ռահվիրայական գաղափարներով: www.h-pem.com-ը կը յանձնարարուի բոլորին համար:

Այս հարթակին վրայ նորութիւնը այն է, որ գործածուող լեզուն անգլերէնն է. ասիկա կը նշանակէ, թէ ան ուղղուած է առաւելաբար արեւմտեան կիսագունդի երիտասարդութեան: Հայկական մշակոյթի հետ խորքային ծանօթացումը հաւանաբար առաջնորդէ նաեւ հայոց լեզուն ուսումնասիրելու եւ ապա՝ գործածելու փափաքի զարթոնումին:

Ելեկարոնային լայնածիր միջոցներու կիրառումը ուղեկից միութիւններու կողմէ այլեւս անշրջանցելի է: Նոր սերունդները ենթակայ են բացառաբար ա՛յս ձեւի միջոցներով կատարուող քարոզչութեան. անշուշտ այլո՛ց կողմէ կատարուող քարոզչութեան՝ զուտ շահագիտական նպատակներով կատարուող քարոզչութեան:

Մեր հակազդեցութիւնը պէտք է ըլլայ ուժեղ եւ հրապուրիչ. արդիւնաւէտ ըլլալու համար՝ միահամուռ: Ասիկա է ներկայի մեծ մարտահրաւէրը, որուն պէտք է ուղղուին մեր հայեացքները:

Մկրտիչ Մկրտիչեան

Ուրե՛ր եւ պատրաստ կոուելու Սուրիոյ մէջ... եւ ի՞նչ բանի համար

Հիւսիսային Սուրիոյ կնճիռը անգամ մը եւս կը դրսեւորէ մեծապետական ուժերու կարելիութիւններն ու դիտաւորութիւնները՝ տարածաշրջանի կացութեան լուծում կարենալ բերելու եւ միաժամանակ իրենց շահերը ապահովելու դժուարին խնդրին մէջ: Երեւոյթները ցոյց կու տան, որ ո՛չ Միացեալ Նահանգներ եւ ո՛չ Ռուսաստան արամադրութիւն ունին մխրճուելու տարածաշրջանային այս ճահիճին մէջ: Բայց նաեւ ո՛չ Միացեալ Նահանգներ եւ ո՛չ Ռուսաստան պերճանքը ունին քաղաքական այս ճահիճէն հեռու մնալու, տրուած ըլլալով, որ անոնք կենսական շահեր ունին տարածաշրջանին մէջ եւ պատրաստ չեն մէկզմէկու գիջելու իրենց ռազմավարական դիրքերը:

Այս դաժան երկրնորանքը ինքնաբերաբար կ'առաջնորդէ միջնորդաւորուած քաղաքականութեան գանազան կերպարներու (models): Կ'առաջնորդէ այն բանին, որ Պաղ պատերազմի տարիներուն կը կոչուէր clientitis (յաճախորդախտ): Այսինքն՝ կնճուտ տարածաշրջանի մը մէջ «հաւատարիմ» եւ յուսալից գործակիցներ (այսինքն՝ յենարաններ, այսինքն՝ արբանեակներ) ընտրելու գործընթացին...

Եւ բնականաբար առաջին հերթին հարց պիտի տրուի, թէ իսկպպէս որո՞նք են այսօր հիւսիսային Սուրիոյ հողին վրայ կուռելու պատրաստ ուժերը, որոնք կրնան ծառայել այս նպատակին: Միացեալ Նահանգներ եւ Ռուսաստան գիտեն, որ կարելի չէ արհեստական խթանումներով «գիւնուոր» ստեղծել: Չինուորը կը ծնի առճակատումներու տարերային գործընթացին մէջ: Այս առումով, մեծապետական ուժերը գիւնուոր չեն: Անոնք չոն են որպէս ռազմախարսխային բեւեռ եւ հարուածային մեքենականութիւն, որ պէտք ունի իրական գիւնուորի, որպէսզի կարենայ վերածուիլ իրական ուժի:

Ներկայիս ռազմագետնի վրայ գիւնուոր հանդիսացող ուժերն են՝ սուրիական բանակը, քիւրտերը, Թուրքիան, Իրանը, իսլամ ծայրայեղական խմբաւորումները եւ յատկապէս Իսլամական պետութիւնը, որ թրքական խարսխներէն արդէն սկսած է դուրս բեր-

ուիլ՝ յաւելեալ կարողականութեամբ օժտելով Թուրքիոյ հարուածային բուռնցքը: Եւ այսօր մեծապետական ուժերու խնդիրն է որոշել, թէ ինչպէ՞ս կարելի պիտի ըլլայ զսպիլ, ուղղորդել, կառավարել, կարգաւորել եւ իւրացնել «իժ»երու այս տարերային բոյնը եւ ի՞նչ նպատակի համար եւ ի՞նչ գնով:

Բնական է, որ հիւսիսային Սուրիոյ իրերու ընթացքը իր անխուսափելի հետեւանքները պիտի ունենայ աւելի լայն տարածաշրջանի մը կտրուածքով: Հիւսիսային Սուրիան հզոր դողանջներ ունի ամէնուրեք եւ մեծապետական աշխարհակարգը մեծապէս զգայուն է նաեւ երկրորդական այս շարժերուն:

Թրքական յառաջխաղացքը, որ ըստ էութեան հակադարձութիւն մըն էր Թուրքիոյ կողմէ վաղուց շեշտուած քրտական սպառնալիքին, այսօր արդէն սկսած է նոր յաւակնութիւններով ներկայանալ: Քրտական սպառնալիքին դիմաց «անվտանգութեան գօտի» ստեղծելու պատրուակը յանկարծ կը մղէ Թուրքիան համեմատաբար նեղ հողաշերտի մը (15 քմ) ակնկալութեանէն անցնելու շատ աւելի լայն գօտիի մը (50 քմ) իւրացման: Թրքական յարձակողականը այլեւս միայն քիւրտերուն դէմ չէ: Ան ուղղուած է սուրիական ուժերուն դէմ՝ սկսած է դառնալ «թրքական սպառնալիք» մը սուրիական հայրենիքին դէմ, եւ յանկարծ փոխուած են խաղաքարտերը: Թրքական սպառնալիքը այժմ յստակօրէն կը թակէ Իրաքի, Իրանի, Ռուսաստանի եւ նոյնիսկ Չինաստանի դռները:

Հարց պէտք է տալ, թէ արդեօ՞ք այս էր նախագահ Թրամփի գրաւը իր անակնկալ որոշման ետին: Այսինքն Թուրքիոյ միջոցով աւելի հիմնաւորապէս խարսխուիլ տարածաշրջանին մէջ՝ գոհելով քիւրտերը եւ վերջ դնելով այս վերջիններու անկախութեան նկրտումներուն: Պարզ խօսքով, նոր դաշի՛նք մը նախագահ էրտողանին հետ՝ ի վերջոյ զայն դուրս քաշելով Մոսկուայի հետ մերձեցման իր ներկայ սիրախաղերէն: Նոր բանաձեւ՝ մը՝ Թուրքիոյ հետ բնական դաշնակիցներ ըլլալու նոր իրականութեան: Ա՛յս էր նախագահ Թրամփի գրաւը, թէ՞ այս կացութիւնը զարգացաւ ի հեճուկս իր գրաւին

զուտ թրքական յաւակնութիւններու եւ ռազմավարութեան հողին վրայ... հասնելով նոյն տեղը:

Մէկ բան յստակ է այս կէտին վրայ: Թրքական ներկայ նախաշարժակունքը անպայման ծնունդ պիտի տայ հակառակորդ նոր ճակատի մը ձեւաւորման: Արդէն կը խօսուի Մոսկուայի հովանաւորութեամբ ստեղծուելիք քիւրտ-սուրիական դաշինքի մը մասին՝ դիմագրաւելու համար թրքական սպառնալիքը: Յառաջիկայ օրերը ցոյց պիտի տան, թէ ո՛ր կրնայ հաւասարակշռուիլ ներկայ առճակատումը: Արդեօ՞ք քրտական անկախութիւնը ներքին ինքնավարութեան ձեւաչափով պիտի վերապրի ռուսական հովանաւորութեան տակ, եւ թրքական յարձակողականը յաջողապէս ետ մղուի կրկին գլանալով Թուրքիոյ՝ հիւսիսային Սուրիոյ վրայ տիրապետութիւն հաստատելու իր չարաշուք երազը: Եւ՝ Միացեալ Նահանգները դնելով նոր կացութեան առջեւ:

Հանրապետական Թուրքիան միշտ դիտած է հիւսիսային Սուրիան որպէս իր անապահովութեան գօտին: Միշտ երազած է ունենալ նաեւ հիւսիսային Իրաքը՝ իր քարիւղի հարուստ պաշարներով: Միշտ սպրած է տարածաշրջանը ունենալու պատրանքը՝ առանց քիւրտերու: Յեղասպանական քաղաքականութիւնը միշտ եղած է կենսական անհրաժեշտութիւն Թուրքիոյ համար: Եւ միշտ յուսացած է ունենալ Արեւմուտքն ու Ռուսաստանը իր կողքին՝ այս ոճրային երազներու իրականացման համար:

Իր ներկայ քաղաքականութեամբ, Միացեալ Նահանգներ յստակօրէն կը շարունակէ իր ներկայութիւնը պահպանել տարածաշրջանին մէջ՝ առանց էապէս գիջելով իր հիմնական շահերէն եւ յաւակնութիւններէն: Միացեալ Նահանգներ վերադարձած կը թուի ըլլալ թուրքամերիկեան սերտակցութեան, բայց այս անգամ՝ շատ աւելի վտանգաւոր ձեւաչափով մը: Իսկ Ռուսաստան իր հաւանական նոր դաշինքով՝ Սուրիոյ, Իրանի եւ քիւրտերուն հետ, պիտի կրնա՞յ շրջանը վերադարձնել սթաթիւս բուոյի եւ ինքնաբերաբար կանխել փոթեմնայն ոճիրը դէթ նոր ժամանակաշրջանի մը համար... Եւ ի՞նչ գնով:

Կարօ Արմենեան



Dr. Hayk Danaciyán D.M.D.
Chirurgien Dentiste - Dental Surgeon

395, Curé Labelle, Chomedey Laval, Qc. H7V 2S5
Tél.: (450) 973-1046 Fax: (450) 973-9974

ՀՕՍ-ի Անկողնային «Սուս» Անանանիտի



Տ Ա Ր Ե Կ Ա Ն
Տ  ն ա պ ա ճ ա ռ

ՕՐՈՒԱՆ ԿԵՐԱՍԱՅՐ՝ ԸՆԿԻ. ՄԻՐԿԱՐԴ ԶՈՒՐԻՔԵԱՆ



9 և 10 Նոյեմբեր 2019
Ժամը 10-ըն 5

ՄՈՆՏՐԵԱԼԻ ՀԱՅ ԿԵՐՈՒՆ
3401 RUE OLIVIER-ASSELIN
MONTREAL (QC) H4J 1L5



ԿԻՃԱԿԱ ՀԱՆՈՒԹԻՒՆ



FONDATION
AIR CANADA
FOUNDATION

ՀԱՅԿԱՆ ԱՆՆՈՒՄԱՆ ՈՒՏԵՍԵՆԵՆ ԵՒ ԱՆՈՒՑԵՆԵՆ // ԿՈՒՍՈՒՄ ԶԱՐԿԵՐ



ՀԱՅԿԱԿԱՆ ԶԵՆԱՐՈՒՆԵԱՏԻ ԳՈՐԾԵՐ, ՀԱԳՈՒՍԵՆԵՆ, ԳՈ ՀԱՐԵՐԻՆ

Il n'y a pas d'âge
pour être heureux !



RÉSIDENCE POUR ÂMÉS AUTONOMES
ET SEMI-AUTONOMES

Appartements 1 1/2 à 4 1/2
avec ou sans repas

Պատարագ տեղի կուլենայ
ներ հանգստեան տունէն ներս



1 1/2 à 4 1/2

RÉSIDENCE ENCLUSE AVEC SERVICES
DE QUALITÉ À PRIX ABORDABLES

12300, boul. Laurentien (angle boul. Gouin) Montréal Qc H4K 2Z6

514 335-1881 - info@manoirgouin.com

Visitez notre site web pour connaître nos promotions

www.manoirgouin.com

Suivez-nous sur Facebook 



La rédaction des Nouvelles d'Arménie cambriolée: Le CCAF pointe la Turquie du doigt!

PARIS—Dans la nuit du samedi 19 au dimanche 20 octobre, un cambriolage a eu lieu dans les locaux de la rédaction des Nouvelles d'Arménie Magazine, un des principaux titres de la presse arménienne. Du matériel mais surtout des données sensibles et confidentielles, des documents de travail et une partie du fruit des enquêtes en cours ont disparus. Et ce, à quelques heures du départ du journal pour l'imprimerie.

Le CCAF (Conseil de Coordination des Associations Arméniennes de France) condamne fermement cette intrusion qui paraît liée à l'objet de magazine. Ara Toranian, directeur de la rédaction, était particulièrement mobilisé ces derniers jours en faveur des Kurdes, victimes de l'offensive turque en Syrie. Il a notamment participé au meeting organisé par le CCAF et Bernard-Henri Lévy sur le parvis des droits de l'homme le 12 octobre dernier à un meeting au théâtre du Gymnase avec Jean-Christophe Lagarde le 15 octobre et à la manifestation du CDK-F à la

République.

La rédaction est connue pour ses engagements pour la défense des libertés en Turquie, la pénalisation du négationnisme du génocide des Arméniens, comme sur son soutien à la République du Haut-Karabagh. Son directeur fait également l'objet de harcèlement judiciaire de la part de négationnistes.

Pour Mourad Papazian, co-Président, avec Ara Toranian, du CCAF, «ce cambriolage est une attaque. Il est signé par les services turcs à Paris. Nous nous attendions à une offensive de l'ambassadeur de Turquie en France contre les milieux anti-Erdogan. Cette attaque a, non seulement pour objectif de collecter des informations sur nos futurs projets mais constitue également une tentative d'intimidation. En conséquence, nous demandons aux autorités françaises une extrême vigilance pour protéger la liberté d'expression.»

BUREAU NATIONAL DU CCAF

Le 21 novembre 2019

Les dirigeants arméniens et azéris «d'accord pour apaiser les tensions»

EREVAN—Le Premier ministre arménien Nikol Pachinian et le président azerbaïdjanais Ilham Aliyev ont promis de redoubler d'efforts pour «préparer les populations à la paix», ont déclaré des médiateurs internationaux à l'issue d'une nouvelle tournée dans la zone de conflit du Haut-Karabagh le 17 octobre.

Les diplomates américains, russes et français, coprésidents du groupe de Minsk de l'OSCE, ont rencontré Pachinian et Aliyev lors de leurs derniers voyages à Erevan, Stepanakert et Bakou.

«Les deux dirigeants ont informé les coprésidents de leur récente conversation lors du sommet de la CEI à Ashgabat et ont présenté leurs idées sur la manière de faire avancer le processus de règlement du conflit», indique une déclaration commune des médiateurs. «Les coprésidents se sont félicités de la perspective de mettre

en oeuvre des mesures humanitaires et de sécurité spécifiques pour préparer les populations à la paix et réduire les tensions.»

Les médiateurs n'ont pas détaillé ces mesures. Ils ont affirmé avoir exhorté les parties en conflit à supprimer «les obstacles susceptibles d'entraver» les travaux d'une mission de l'OSCE surveillant le régime de cessez-le-feu le long de la ligne de contact du Karabagh et de la frontière arméno-azerbaïdjanaise. Ils n'ont pas précisé quels sont ces obstacles et qui les a créés.

Aliyev et Pachinian avaient déjà convenu de prendre «un certain nombre de mesures dans le domaine humanitaire» et de contribuer à créer «un environnement propice à la paix» lors de leur rencontre à Vienne en mars. Le processus de négociation ne semble pas avoir progressé depuis.

(NorHaratch)

Bako Sahakian a assisté à l'ouverture du Centre culturel et scientifique arméno-iranien

CHOUCHI—Le 14 octobre, le Président de la République d'Artsakh, Bako Sahakian, a assisté à la cérémonie d'ouverture du Centre culturel et scientifique arméno-iranien à Chouchi, informe le Département de l'information du Cabinet du Président.

Le Président Sahakian a remercié la Fondation «Idea» et le

Fonds de préservation du patrimoine historique oriental pour la mise en oeuvre du projet, et a exprimé l'espoir que le centre jouera un rôle important dans le renforcement des relations arméno-iraniennes, dans la promotion du dialogue interreligieux, ainsi que dans le développement du tourisme à Chouchi.

(Armenews)

Pashinian nie persécuter le président de la Cour constitutionnelle

EREVAN—Le Premier ministre Nikol Pachinian a nié le 21 octobre les accusations de l'opposition selon lesquelles il aurait ordonné des poursuites pénales contre le président de la Cour constitutionnelle arménienne, Hrayr Tovmassian, dans le but de forcer ce dernier à démissionner.

Le porte-parole de Pachinian, Vladimir Karapetian, a par la même occasion accusé Tovmassian de complicité dans des crimes commis par des membres du Parti républicain lorsqu'il était au pouvoir.

Le 17 octobre, deux organismes chargés de l'application des lois ont annoncé la tenue d'enquêtes pénales distinctes sur Tovmassian, deux jours après que sept des huit autres cours constitutionnelles aient rejeté les appels du Parlement arménien demandant son renvoi.

Le Service spécial d'enquête (SIS) a déclaré qu'il enquêtait sur une possible «usurpation du pouvoir» par Tovmassian et d'anciens hauts responsables qui l'ont aidé à devenir le président de la plus haute cour du pays en 2018. Pour sa part, le Service de sécurité nationale (SSN) a interrogé son père et deux filles.

Les représentants du Parti républicain ainsi que d'autres critiques de Pachinian ont dénoncé les poursuites pénales comme des poursuites politiques. Ils étaient particulièrement critiques à l'égard des actions du SSN, affirmant que les autorités visaient maintenant les proches de Tovmassian dans le cadre de leurs efforts pour renverser le président du tribunal.

Vladimir Karapetian a nié ces affirmations. «Si le SSN a des questions concernant la corruption, je ne vois rien de mal à cela. Cet organisme peut poser des questions à n'importe qui. Les procédures se déroulent à ce niveau, et toute discussion sur la pression [du gouvernement] n'a aucun sens. Ils savent très bien qui est Hrayr Tovmassian», a déclaré Karapetian à propos des critiques.

Le responsable a également précisé que Pachinian maintenait ses récentes déclarations selon lesquelles Tovmassian, qui était affilié au Parti républicain, avait été nommé président de la Cour constitutionnelle à la suite d'accords juridiques vouteux passés avec les anciens dirigeants politiques de l'Arménie.

(NorHaratch)

Saga de la Cour constitutionnelle: des proches de Hrayr Tovmasian interrogés

EREVAN—Le service de sécurité nationale (SNS) a interrogé le 18 octobre le père de Hrayr Tovmasian et ses deux filles, un jour après le lancement par une autre agence chargée de l'application de la loi d'une procédure pénale distincte contre le président de la Cour constitutionnelle arménienne.

Le SNS a déclaré qu'il avait décidé de demander des «explications» à ses proches et à d'autres personnes lors de «la préparation du matériel» en vue d'une éventuelle enquête. Il n'a donné aucun autre détail dans une brève déclaration publiée au milieu des allégations de l'opposition selon lesquelles le gouvernement arménien viserait la famille de Tovmasian dans le cadre de ses efforts pour le forcer à démissionner.

Un avocat de la famille, Hayk Sargsian, a expliqué que les officiers du SNS avaient posé des questions aux filles de Tovmasian concernant principalement leurs avoirs, notamment une voiture et un garage qu'elles avaient reçues en cadeau d'un cousin qui avait émigré aux États-Unis en 2016.

Sargsian a ajouté qu'ils avaient également demandé des informations sur une autre voiture que l'une des jeunes femmes possédait avant de la donner à l'armée du Nagorno-Karabagh à peu près au même moment. Aucune des deux femmes n'a été interrogée sur les activités de son père, a-t-il révélé aux journalistes après les interrogatoires.

Le père de Tovmasian, qui se nomme Vartan, a été interrogé au siège du SNS au centre-ville d'Erevan plus tôt dans la journée. Selon son avocat, Amram Makinian, des agents du SNS lui auraient posé des questions sur le toit de sa maison à

un étage située dans un village près d'Erevan. En particulier, ils se sont demandés quand il a été réparé et qui a financé cela. L'homme de 75 ans leur a dit qu'il avait réparé le toit à ses frais et avec l'aide de ses voisins, a précisé l'avocat.

Les officiers de la SNS avaient déjà rendu visite à Vartan Tovmasian et parlé la veille à son domicile dans le village de Darakert.

Le SNS a envoyé des convocations au père et aux filles de Tovmasian alors que le Service spécial d'enquête (SIS) d'Arménie avait ouvert une enquête pénale sur une possible «usurpation de pouvoir» du président de la Cour constitutionnelle et d'anciens hauts fonctionnaires.

Une enquête de ce type a été demandée par un législateur qui a récemment affirmé que Tovmasian avait eu des arrangements avec des membres clés de l'ancien leadership arménien pour prendre illégalement la tête du tribunal en mars 2018. Le SIS n'a encore accusé personne. En vertu du droit arménien, Tovmasian ne peut être poursuivi sans le consentement d'au moins cinq des neuf juges de la Cour constitutionnelle.

Sept de ces juges ont publié le 18 octobre une déclaration commune dans laquelle ils déclaraient qu'ils «surveillent l'évolution de la situation concernant Hrayr Tovmasian et les membres de sa famille et qu'ils réagiront si besoin est».

La Cour constitutionnelle avait refusé de renverser son président la semaine passée. Le Parlement arménien a appelé à sa destitution dans un appel interjeté le 4 octobre devant le tribunal par sa majorité fidèle au Premier ministre Nikol Pachinian. Le parlement a accusé

Tovmasian d'avoir mal traité les appels interjetés par l'ancien président Robert Kocharian, qui avait été arrêté. Il a également évoqué son appartenance passée au parti républicain (HHK).

Des politiciens de l'opposition et d'autres critiques affirment que le gouvernement de Pachinian s'appuie désormais sur les forces de l'ordre pour forcer Tovmasian à se retirer. Plusieurs douzaines d'entre eux, y compris des personnalités de HHK, se sont rassemblés devant le bâtiment SNS situé dans le centre-ville lors des interrogatoires du 18 octobre.

«La seule structure étatique qui protège plus ou moins la constitution et sert la République d'Arménie, plutôt que le régime de Nikol Pachinian, est la Cour constitutionnelle», a assuré le porte-parole du HHK, Eduard Sharmazanov. «Ce qui se passe maintenant est le résultat d'un ordre politique fabriqué.»

«Il est apparu hier que nos autorités ont fait un pas qui va à l'encontre de l'état de droit mais aussi de la moralité afin d'atteindre leur objectif politique de se débarrasser de Hrayr Tovmasian», a critiqué Ruben Melikian, avocat.

Les alliés politiques de Pachinian ont toutefois nié le fait que Tovmasian soit persécuté pour des raisons politiques.

«Je peux comprendre les représentants des [anciennes] autorités», a commenté Vahagn Hovakimian, député du groupe au pouvoir, Mon Pas. «Ils voient les choses dans les limites de leur horizon mental, à savoir ce qu'ils ont eux-mêmes fait».

«Personne n'est soumis à la persécution politique», a ajouté Hovakimian au service arménien de RFE/RL.

(Armenews)

L'Azerbaïdjan prévoit d'augmenter de 20,9% ses dépenses militaires

BAKOU—Le ministère des Finances de l'Azerbaïdjan vient de publier le budget qui sera consacré à la Défense pour 2020. Le budget sera de 3,853 milliards de manats soit US\$2,267 milliards. Pour 2019 ce budget était de 3,187

milliards de manats. L'augmentation du budget de la Défense pour 2020 sera donc de 20,9%.

Rappelons que l'été dernier Bakou a augmenté le budget consacré à la Défense afin de faire face à une demande crois-

sante d'équipement militaire. Ce fait démontre que le budget voté par le Parlement azéri lié à la Défense n'est pas respecté, des rajouts de budgets s'effectuant dans le cours de l'année.

(Armenews)

Un siècle après, la mentalité et les méthodes de la Turquie restent immuables

GÉRARD MERDJANIAN

Il y a un siècle, le gouvernement Jeunes-Turcs déportait et massacrait en masse les Arméniens d'Anatolie au motif que c'était des alliés de l'armée tsariste qui attaquait les militaires turcs, et que pour leur sécurité, il était nécessaire de les déplacer dans les déserts de Syrie et de la Mésopotamie. Remplacer arméniens par kurdes, les fédajins arméniens par YPG (= PKK), les bandes irrégulières turques par supplétifs, et *Bis repetita*.

Sachant pertinemment que les Occidentaux n'enverront pas de troupes au sol, ni même d'attaques aériennes, et sourd aux appels de la communauté internationale de mettre fin aux exactions commises au nom de Dieu «Allahu akbar», les supplétifs de la Turquie composés de groupuscules djihadistes et de tous ceux qui veulent en découdre avec le régime de Bachar el-Assad, s'en sont pris à la population civile et aux kurdes du YPG.

Pour le sultan le coup est triple. Il chasse les kurdes de sa frontière syrienne au motif que ce sont des terroristes affiliés au PKK; plante à leur place des réfugiés syriens qui résident actuellement en Turquie; fait taire toute velléité aux 20 millions de kurdes vivant en Turquie. S'il freine directement toute création d'une entité autonome de Kurdistan, il permet à Daech de renaître de ses cendres en détruisant les camps de prisonniers.

Il ne fait aucun doute que le président Trump a donné son feu vert, certes jusqu'à un certain point, l'important pour lui étant de rapatrier les 'boys' au pays. Tout comme d'ailleurs le président Poutine qui ne tient pas à voir se créer un Kurdistan autonome, et encore moins indépendant.

Et l'Union européenne dans tout cela? Comme à son accoutumée elle pousse des cris d'orfraie se contentant de bloquer les ventes d'armes à Ankara, ce dont Erdoğan n'a rien à faire compte tenu de son stock existant. Quant à appliquer des sanctions économiques, c'est valable quand c'est la Russie qui outrepassse ses droits, pas pour les pays ou les alliés de l'OTAN. «L'homme malade de l'Europe» peut dormir tranquille sur ses deux oreilles, les grandes puissances ne le gêneront pas outre mesure, voire même continuer à le caresser dans le sens du poil. Quant à l'UE proprement dit, ses valeurs dites démocratiques ne font pas le poids face aux affaires. Mais pas question de rompre les négociations d'adhésion. Plus hypocrite tu meurs!

Alors que ses troupes ont purement et simplement envahi le pays voisin et que ses sbires ont massacré tout ce qui résiste — les successeurs de l'empire ottoman sont coutumiers du fait —, le président Erdoğan s'est rendu à Bakou pour se faire valoir auprès de ses semblables turcophones.

Comme il fallait s'y attendre, il a tancé l'Arménie pour «l'occupation du Karabagh», version 'l'hôpital qui se fout de la charité', alors que son ministre des Affaires étrangères a rappelé que la Turquie et l'Azerbaïdjan n'étaient «qu'une seule et même nation dans deux États». Ces propos n'ont fait que conforter le dictateur Ilham Aliev, qui s'en est donné à joie pour déverser son fiel anti-arménien. Il faut reconnaître que le fils d'Heydar fait de gros efforts pour ressembler à son grand frère ottoman sur la manière de 'pacifier' la région. Et comme il avait en face de lui des États musulmans turcophones, il a accusé les arméniens de mener une guerre de religion contre les musulmans.

On notera que le premier Ministre hongrois Viktor Orban, qui participait à la dite réunion, est le populiste qui a autorisé l'extradition en 2012 du meurtrier condamné à perpétuité Ramil Safarov vers l'Azerbaïdjan, lequel a été gracié illico par Ilham Aliev. C'est que l'on appelle un renvoi d'ascenseur, d'autant que le dénommé Aliev avait 'aidé' financièrement le gouvernement Orban lors de cette transaction.

